



ՍՈՒՐԲ ԵՐՐՈՒՊ-ՈՒԴԻՐՆ ՆԱՅԱՍԱՐԱՆԵԱՅՑԻ ԵԿԵՂԵՑԻ
 HOLY TRINITY ARMENIAN CHURCH

RIGHT REV. VAZKEN KESHISHIAN, RECTOR
 RECTOR'S OFFICE 964-3286

PARISH OFFICE 924-6514
 AUDITORIUM 923-0081

Գերաշնորհ
 Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան
 Առաջնորդ

21 Յունուար 1981

Գերաշնորհ Արքեպսան Հայր,

Ստացայ ձեր Հոկտեմբեր 14, 1980 թուակիր եւ 27036 թուահամար նամակը, որտեղ շատ հստակ կերպով կը սահմանէք իմ պարտականութիւններս իբրեւ սարկաւազ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ:

Այս առնչութեամբ հանդիպում մը ունեցայ ծխական Խորհուրդին հետ: Պէտք է ըսեմ, որ առաջին անգամ անվճարական եւ դժկամական վերաբերմունք ցոյց տուին: Բայց երբ լուրը տարածուեցաւ գաղութէս ներս, հարկ եղաւ անգամ մը եւս հանդիպիլ ծխական Խորհուրդին հետ եւ աւելի լրջութեամբ անդրադառնալ այս երեւոյթին վրայ:

Երկրորդ հանդիպման ընթացքին որոշուեցաւ, որ Յունուար 1, 1981-էն սկսեալ ստանձնել այն պաշտօնը զորս կը սահմանէք Հոկտեմբեր 14, 1980 թուակիր եւ 27036 թուահամար նամակով:

Սկիզբը դժուար էր, ոմանց համար, ընդունիլ այս նոր պաշտօնի նշանակումը: Հետեւեալը քաշուեցան եկեղեցիէն, թողնելով զիս մինակ Ս. ծննդեան տօնակատարութեանց ընթացքին: Բայց իմ վճարկամութիւնս եւ Հայր Եղիշէ Վրդ. Կիզիրեանի քաջալերական խօսքերը պատճառ եղան, որ շարունակեմ այն գործը, որուն համար նշանակեցիք զիս:

Արդէն իսկ գտած եմ երեք մանչեր, որոնց կը պատրաստեմ իբրեւ Ս. Խորանի սպասարկողներ, կազմած եմ սարկաւազաց ցանկը, որոնք իրաւասութիւն ունին ծառայելու Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ եւ նշանակեցի պրն. Մինաս Սէլեան եւ պրն. Սարգիս Տէքիրմէնճեան կրօնական սպասներու, գոյքերու եւ զիրքերու պատասխանատու յանձնախումբ:

Ահաւասիկ, Արքեպսան Հայր քիչ մը ուշացումով, բայց իրարհասկացութեամբ եւ կարգապահութեամբ եղաւ այն ամէնը զորս յիշեցի:

Իսկ, զալով իմ ուսումնական ծրագրիս, անմիջապէս ձեզ օղանաւակայան հասցնելէ ետք հետապնդեցի զայն, եւ այս անգամ կապի մէջ մտնալով տնօրէնին հետ զիս տեղեկացուց, որ Յունուար ամսուն չունին նոր դասընթացներու ծրագիր, բայց թելադրեց, որ յառաջիկայ զառնան նորէն զինք տեսնամ այս ուղղութեամբ:

Մասնաւոր շնորհակալութիւն ձեր փափկանկատութեան համար Արքագան
Հայր, իսկապէս անակնկալ մըն էր ձեր փոքրիկ նուէրը, զոր երբէք չէի
ակնկալէր: Կ'ուզեմ աւելցնել, որ ինծի համար մեծ հաճոյք է ծառայել
ձեր թեմէն ներս եւ երբեւիցէ ունենաք որեւէ ծրագիրներ մի վառանիք
տեղեակ պահելու զիս:

Մնամ ձեր Ս. Աջը համբուրող
Ձեր խոնարհ զաւակը՝



Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Աւագ Սարկաւագ